*ԽԱՉԻԿ ՍԱՄՎԵԼՅԱՆ*
*Բանասիրական գիտությունների թեկնածու*

# ԿՈՄԻՏԱՍԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

*«...Ոչ է պատմութիւն ճշմարիտ առանց ժամանակագրութեան...»:*

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ

Տարեգրությունը, լայն առումով որպես ժամանակագրություն, ուսումնասիրողին մեծ հնարավորություն է տալիս վավերական հիմքի վրա դնել կոմիտասագիտության զարգացումը, կանխում է եղած տարընթերցումները, անճշտություններն ու աղավաղումները և նախադրյալներ ստեղծում այդ մեծ անհատականության գիտական կենսագրության ամբողջացման համար, որի անհրաժեշտությունն այսօր դառնում է ավելի քան հրամայական:

Այս ամենը նկատի ունենալով՝ անհրաժեշտ համարեցինք «Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրությանը հանձնել Կոմիտասի կյանքը և գործունեությունը ներկայացնող տարեգրության սույն հատվածը:

Աշխատել ենք վերհանել Գևորգյան Հոգևոր Ճեմարանում Կոմիտասի ստացած կրթության կարևոր դրվագներին վերաբերվող փաստերը:

## 1869

**Սեպտեմբեր 26, Փոքր Ասիա, Քեռթահիա** - Սողոմոնյանների գերդաստանում ծնվում է արու զավակ: Հայրը՝ Գևորգ Սողոմոնյան, քեռթահիացի, մայրը՝ Թագուհի Հովհաննիսյան, բրուսացի:

Հայրը՝ Գևորգը, եղել է կոշկակար: Թե՛ Գևորգը և թե՛ Թագուհին իրենց ծնողներից ժառանգել են ձայնական տվյալներ և հորինել մի շարք եղանակներ, որոնք երկար ժամանակ երգվել են քեռթահիացիների կողմից: «Մորս և հորս տաճիկ լեզվով և եղանակներով հորինած երգերը,- գրում է Կոմիտասը «Ինքնակենսագրականում» 1908 թվականին,- դեռ երգում են մեծ հիացմունքով մեր քաղաքի ծերերը»: «Սողոմոնյաններն ու քեռթահիացի հայ հին ընտանիքները,- գրում է Կոմիտասը,- հայկական զոկ ցեղից են և գաղթել են ԺԷ դարու վերջում Գողթան գավառի Ցոնա գյուղից: Մեր ընտանիքը հարուստ է եղել, բայց երբ ես ծնվել եմ, գրեթե աղքատացած է եղել»:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ., հմր 71-72 տետր Ա:

**Սեպտեմբեր 29, Քեռթահիա** - Ս. Թեոդորոս հայոց եկեղեցում մկրտում են Գևորգ Սողոմոնյանի ու Թագուհի Հովհաննիսյանի նորածին զավակին և անունը դնում Սողոմոն:

Կնքահայրը լինում է Հարություն Սողոմոնյանը (Կոմիտասի հորեղբայրը), իսկ մկրտող քահանան՝ Տեր Ղազարոսը:

ՀՀՊԿՊԱ, ֆոնդ 312, թղթ. 3, վավ. 47, թերթ 4:

**Նույն օրը** - Սողոմոն Սողոմոնյանի կնքման ծեսը վավերացվում է «Մկրտության վկայականում», որը արձանագրությունների մատյանի մեջ գրանցվում է 623-րդ համարի ներքո:

Նույն տեղում:

## 1870

**Մարտ 15, Քեռթահիա** - Վախճանվում է Սողոմոն Գևորգի Սողոմոնյանի մայրը՝ Թագուհի Հովհաննիսյանը: Փոքրիկ Սողոմոնի մայրական խնամքը իր վրա է վերցնում հորեղբայրական տատը՝ Մարիամը: «Սա,- գրում է Կոմիտասը - եղել է ինձ համար երկրորդ մայր և իմ ապագայի մասին լուրջ հոգ տանող»:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ., հմր 71-72, տետր Ա և Բ:

## 1874

**Սեպտեմբեր 28, Վաղարշապատ** - Հանդիսավոր արարողությամբ բացվում է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Դ-ի ջանքերով հիմնադրված Գևորգյան Հոգևոր Ճեմարանը:

Համաձայն հաստատված ծրագրի, ճեմարանում ուսման տևողությունը հաստատվում է ինը տարի, որից վեցը՝ դպրոցական բաժնում, երեքը՝ լսարանական:

«Արարատ», 1874, հմր 9, էջ 342:

**Մ. Աբեղյան,** Գևորգ Դ-ի համառոտ կենսագրությունը, Վաղարշապատ, 1899, էջ 69:

## 1876

**Սեպտեմբեր, Քեռթահիա** - Յոթնամյա Սողոմոն Գևորգի Սողոմոնյանը սկսում է ուսանել ծննդավայրի չորս բաժանմունք ունեցող Էջմիածնի անվան Ազգային վարժարանում, ուր սովորում է հայերեն գրել ու կարդալ:

«1876 թիվն էր, երբ առաջին անգամ ոտքս դրի դպրոցի շեմքը,- գրում է Կոմիտասը «Ինքնակենսագրականում»,- մեր քաղաքի վարժարանը մի չորս բաժանմունք ունեցող դպրոց էր»: «Սողոմոնը խղճուկ տղա էր,- պատմում է նրա դպրոցական ընկեր Նշան Միլիտոնյանը,- նիհարակազմ, վտիտ և գունատ: Ավելի ևս խղճալի էր նրա վիճակը ձմռանը, որ Քեռթահիայում նշանավոր էր իր ցրտով և սառնամանիքով: Կես կուշտ, կես անոթի՝ դպրոց էր գալիս: Նա առավոտյան իրենց տան դռան առաջ ինձ էր սպասում, ես վերի թաղից իջնում էի նրանց տուն, և միասին գնում էինք դպրոց:

Մենք՝ բոլոր աշակերտներս, ամառվա շոգին թե ձմեռվա ցրտին, դպրոցի սրահի տախտակամածի վրա նստած սովորում էինք: Այդ ժամանակ դեռ գրասեղան գոյություն չուներ: Մենք մեր տակ փափուկ բազմոցներ էինք դնում: Սողոմոնը բազմոց չուներ և չոր տախտակի վրա էր նստում»:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. 71-72, տետր Բ:

«Էջմիածին», 1950, հմր 1-2, էջ 39:

## 1879

**Հոկտեմբեր 29, Էջմիածին** - Տեղի է ունենում Գևորգյան Հոգևոր Ճեմարանի մանկավարժական խորհրդի նիստը՝ նվիրված ճեմարանի ծրագրերին:

Նիստը որոշում է.

1. Գևորգյան Ճեմարանի հիմնական նպատակն է ուսուցիչներ և հոգևորականներ պատրաստելը:

2. Աշակերտներ ընտրել առավելապես այնպիսի տեղերից, ուր չկան կանոնավոր դպրոցներ և ուսման մեծ կարոտություն կտեսնվի:

3. Աշակերտներ ընտրել գլխավորապես չքավոր ծնողների զավակներից:

4. Ընդունել միայն 12 և 13 տարեկան երեխաներին:

5. Ընդունվողները պետք է լինեն առողջ և ունենան բարոյական ուղղություն:

6. Ընդունվել կարող են նաև Ա և Բ լսարաններում՝ միայն քննությամբ:

ՀՀՊԿՊԱ, ֆոնդ 312, թղթ. 26, վավ. 34, էջ 45:

**Մ. Գ. Գամաղելյան**, Նվիրում կրթական գործին, Եր., 1986, էջ 165:

**Դեկտեմբեր 10, Էջմիածին** - Գևորգ Դ Կաթողիկոսը, նկատի ունենալով, որ արևմտահայ ու պարսկահայ վիճակների երեխաները զրկված են ճեմարանում սովորելու հնարավորությունից, արձակում է «Վասն ընտրութեան աշակերտաց որք կամիցին մտանիլ յառաջին դասարան Ս. Գևորգեան Ճեմարանի Սրբոյ Էջմիածնի» խորագրով հրահանգը, որով սահմանափակում է Երևանի և մյուս թեմերի աշակերտների ընդունելությունը և փոխարենը Թուրքիայի ու Պարսկաստանի վիճակներից պահանջում է «30-ից ավելի աշակերտացուներ տեղական առաջնորդների և թեմական վերատեսուչների ընտրությամբ ուղարկել Էջմիածին Ճեմարանում սովորելու համար»:

«Արարատ», 1880, հմր 3, էջ 116-118:

## 1880

**Հունվար, առաջին կես, Քեռթահիա** - Սողոմոն Գևորգի Սողոմոնյանը ավարտում է Ազգային վարժարանի քառամյա դասընթացը: «1880 թվին,- գրում է Կոմիտասը «Ինքնակենսագրականում»,- ավարտեցի այդ (Քեռթահիայի ազգային միջնակարգ) վարժարանը»:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. 71-72, տետր Ա, Բ:

**Հունվար, երկրորդ կես, Բրուսա** - Ավարտելով իրենց քաղաքի Ազգային վարժարանի քառամյա դասընթացը Գևորգ Սողոմոնյանը մանկահասակ որդուն՝ Սողոմոնին ուղարկում է Բրուսա՝ (մոր ծննդավայրը)՝ ուսումը շարունակելու: «Հայրս,- գրում է Կոմիտասը «Ինքնակենսագրականում»,- մահվանից չորս ամիս առաջ ինձ ուղարկեց Բրուսայի վարժարանը»:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. 71-72, տետր Ա, Բ:

**Մայիս 17, Քեռթահիա** - Վախճանվում է Սողոմոն Սողոմոնյանի հայրը՝ կոշկակար Գևորգ Սողոմոնյանը:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. 71- 72, տետր Ա, Բ «:

**Հունիս, Քեռթահիա** - Հոր մահվանից հետո Սողոմոնին իր խնամքի տակ է առնում Հարություն հորեղբայրը: «Եթե բախտը ինձ չժպտար,- գրում է Կոմիտասը հետագայում,- և ես Ս. Էջմիածին և ապա իմ անգին բարերար պ. Աղեքսանդր Մանթաշյանի միջոցով Գերմանիա չգնայի, կլինեի իմ հայրենիքում՝ Կուտինայում, շատ-շատ

մի կոշկակար, որովհետև որբիս խնամող Հարություն հորեղբայրս էլ կոշկակար էր»:

«Ժամանակ», Կ. Պոլիս, 1910, հմր 599:

**Թ. Ազատյան**, Կոմիտաս վարդապետ, Կ.Պոլիս, 1931, էջ 106:

**Նոյեմբեր, դեկտեմբեր, Բրուսա** - Հոր՝ Գևորգ Սողոմոնյանի մահվան պատճառով Սողոմոնը կիսատ է թողնում Բրուսայի վարժարանում սովորելը և վերադառնում Քեոթահիա: «Դեռ տարին չբոլորած,- գրում է Կոմիտասը,- հորս մահվան պատճառով մեր քաղաքը վերադարձա»:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. 71 - 72, տետր Բ:

**Դեկտեմբեր, Քեոթահիա** - Հոր և տատի մահվանից հետո մանկահասակ Սողոմոնի խնամքը իր վրա է վերցնում հորաքույրը՝ Գյուլինե տուտուն:

Որբացած Սողոմոն Սողոմոնյանը ժամաշապիկը հագին դպրություն է անում իրենց թաղի Ս. Թեոդորոս եկեղեցում:

«Էջմիածին», 1950, հմր 12, էջ 30:

## 1881

**Մայիս-հունիս, Էջմիածին** - Գևորգյան Ճեմարանի տեսչությունը Գևորգ Դ-ի հրամանով հատուկ գրությամբ Քեոթահիայի վիճակի հոգևոր առաջնորդին հանձնարարում է Էջմիածին ուղարկել «... մանուկ մի, որպեսզի ուսումն և կրթությունը ստանա ի բարձրագույն ճեմարանին անդր»:

«Տեղեկագիր», 1956, հմր 9, էջ 102:

**Սեպտեմբեր 1, Էջմիածին** - Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Դ-ի հմր 331 կոնդակով Գևորգյան Ճեմարանում լիազոր տեսուչ է կարգվում Արշակ Նահապետյանը: Ստանձնելով տեսուչի պարտականությունները՝ վերջինս ճեմարանում դասավանդելու համար ուսուցիչներ է հրավիրում Գրիգոր եպս. Աղափիրյանին, Սեդրակ Մանդինյանին, Ստեփանոս Պալասանյանին, Կարապետ Կոստանյանին և Փիլիպոս Վարդանյանին:

«Արարատ», 1881, հմր 9, էջ 528, 535:

**Սեպտեմբեր սկիզբ [4-6], Քեոթահիա** - Փոխառաջնորդ Գևորգ ծ. վարդապետ Դերձակյանը պատրաստվում է մեկնելու Էջմիածին՝ եպիսկոպոս ձեռնադրվելու համար: Ինչպես գրում է Կոմիտասը. «Մեր վիճակի առաջնորդ Գևորգ վարդապետ Դերձակյանը պետք է գնար Սուրբ Էջմիածին՝ եպիսկոպոս ձեռնադրվելու»: Գևորգ Դ Կաթողիկոսի կոնդակի համաձայն նա պետք է իր հետ մի «ձայնեղ» և միջոցներից զուրկ երեխա տաներ Էջմիածին՝ ճեմարանում սովորելու համար: Շուրջ քսան աշակերտների մեջ նախապատվությունը տրվում է հորից ու մորից որբացած մանկահասակ Սողոմոն Գևորգի Սողոմոնյանին:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. 71-72, տետր Բ:

**Սեպտեմբեր 7, Քեոթահիա** - Քաղաքի թաղական խորհդի ատենապետ Գևորգ Երեմյանը և Քերովբե Դավթյանը Գևորգյան Ճեմարանում սովորելու համար Էջմիածին մեկնող Սողոմոն Սողոմոնյանին տալիս են միջնորդագիր՝ ուղղված Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Դ-ին:

«Վեհագույն հրամանով,- ասված է միջնորդագրում,- և շնորհիվ Ձերդ Սրբազնասուրբ Օծության Ս. էջմիածնի Գևորգյան Ճեմարանին գեր. վերատեսչության կողմե

Քեոթահիո վիճակեն ևս քանի ինչ ամիս առաջ պահանջված էր մանուկ մի, որպեսզի ուսումն ու կրթությունն ստանա ի բարձրագույն ճեմարանի անդր»:

Այս անգամ Գեր. Առաջնորդին տեղույս Տ. Գևորգ ծ. վարդապետ Դերձակյանի Ս. Էջմիածին ուղևորվելուն առթիվ ճամփա կդնենք 12-13 տարեկան բնիկ կուտինացի Սողոմոն Գևորգյան (Սողոմոն Գևորգի Սողոմոնյան - Խ. Ս.) անուն տղա մի, որո հետ կգտնվին ընդ ամենախոնարհ գրույս և այն վկայականները, որք հարք դատյալ են հընդունելություն յուր ի ճեմարանն մանկանս, որ թե պարկեշտ վարուքն ու բարուք, և թե որբ ի հորե և ի մորե և զուրկ ի կարևոր մերձավորացն լինելով այս մեծի շնորհիվ, որով ընդ վեհապանծ հովանավորության Զերդ Սրբազնագույն Վեհափառության յուր մեծի անվան նվիրյալ այդ լուսո տաճարին մեջ գիտության որդեգրյալ հայ մանկտին մեյ մեկ արձան անմոռանալի պիտի լինին ապագային, այն մեծագործությանց՝ որով Զերդ Վեհափառությունն արդարև խիստ փառավոր տեղ մը գրավյալ ունի ի պատմություն գերերջանիկ Հայրպետացն Ազգիս...:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, թղթ. 3, վավ. 47, թ. I:

«Տեղեկագիր», ԳԱ, 1956, հմր 9, էջ 101-102:

**Նույն օրը, Քեոթահիա** - Քաղաքի Ազգային վարժարանի ուսուցիչ Հարություն Ճիգնեճյանը և հայկաբանության դասատու Նշան Դպիրյանը Գևորգյան Ճեմարանում սովորելու համար Սողոմոն Սողոմոնյանին տալիս են բնութագիր. «Սողոմոն Ս. Գէորգեան տասներկու կամ տասներեք տարեկան մանուկն աշակերտ Ազգային վարժարանի Կուտինայու կարդայր այժմ ի դպրոցին մերում զնախակրթութիւնս այսինքն զընթերցարան Գարագաշեան ի տաճկերէն թարգմանելով ի Քերականութեան այն ինչ սկսեալ և զԱռաջին հոլովում ևեթ աւարտեալ, իսկ ի թուաբանութեան գտել զթիւս մինչև զհարիւր հազարաւոր և զչորս գործողութիւնս կատարել: Պարկեշտ վարուքն և փութաջան ի բնէ գոլով՝ եթէ ոչ համեմատ հասակին գտանիցի զոր ընթեռնուն և զոր ուսեալ է, ոչ այլ ինչ է պատճառն, այլ անօք և անօգնական իւրումն վիճակ, որով չկարաց անընդհատ յուսումն հանապազորդել և երբեմն իսկ յօտարութիւն թափառեցաւ առ հարկի աղքատութեան զոր վկայելով ի գիտութիւն ստորագրեմք ասդեն...»:

«Տեղեկագիր», 1956, հմր 9, էջ 102:

**Սեպտեմբեր [8-10], Քեոթահիա** - Դուրս գալով ծննդավայրից՝ Սողոմոն Սողոմոնյանը Գևորգ վարդապետ Դերձակյանի ուղեկցությամբ Էսկիշեհիր-Սեոկյուտ-Քյուբլու-Լեֆքե-Պիլեճիք-Ենիշեհիր-Ինկյոլ-Թրոսա-Մուդանիա ուղեգծով, որից հետո ծովային ճանապարհով հասնում են Կ. Պոլիս:

«Ընդարձակ օրացույց», Կ. Պոլիս, 1881:

**Սեպտեմբեր 12, շաբաթ, Կ. Պոլիս** - Դուրս գալով Կ. Պոլսից՝ Սողոմոն Սողոմոնյանը, Գևորգ վարդապետ Դերձակյանի, Սահակ վարդապետ Խապանյանի և Մամբրե վարդապետի ընկերակցությամբ նավով՝ Ինեպոլե-Սամսոն-Քիրասոն- Տրապիզոն ուղեգծով մեկնում է Բաթում:

«Մուրճ», 1905, հմր 5, էջ 200:

«Ընդարձակ օրացույց», Կ. Պոլիս, 1881:

**Սեպտեմբեր 15, Էջմիածին** - Գևորգյան Հոգևոր Ճեմարանում սկսվում են 1881/82 ուսումնական տարվա դասերը:

«Արարատ», 1881, հմր 12, էջ 652-56:

**Նույն օրը, Էջմիածին** - Հոգևոր Ճեմարանի դիվանատան կողմից կազմվում է աշակերտական գործ Կոմիտասի անունով «Հաղագս աշակերտի ճեմարանիս Սողոմոնի

Գևորգյան Սողոմոնյանց Կուտինացվո (Քեոթահիա) նույն ինքը Սողոմոն սարկավագ»: (Գործի համարը՝ 24):

Սողոմոն Սողոմոնյանի աշակերտական գործը հավանաբար կազմվել է հետին թվով, որովհետև սեպտեմբերի 8-ին Քեոթահիայից ելնող Սողոմոնը չէր կարող սեպտեմբերի 15-ին (8 օրվա ընթացքում) հասնել Վաղարշապատ այն դեպքում, երբ Թիֆլիսից Վաղարշապատ նրանք անցել են 8 օրվա ընթացքում՝ ձիասայլով: Հավանական է, որ նրանք Վաղարշապատ հասած լինեն սեպտեմբերի վերջերին:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, թղթ. 3, վավ. 47, թ. 1:

**Սեպտեմբեր 16, չորեքշաբթի, Բաթում** - Կ. Պոլսից Վաղարշապատ մեկնող Սողոմոն Սողոմոնյանը և Գևորգ Դերձակյանն իրենց ուղեկիցների հետ վաղ առավոտյան հասնում են Բաթում:

«Մուրճ», 1905, հմր 5, էջ 200:

«Ընդարձակ օրացույց», Կ. Պոլիս, 1887:

**Սեպտեմբեր 18-20, Թիֆլիս** - Սողոմոն Սողոմոնյանը, Գևորգ Դերձակյանը, Սահակ վարդապետ Խապայյանը և Մամբրե վարդապետը հյուրընկալվում են վիրահայոց հոգևոր առաջնորդ Գևորգ Աղամիրյանի տանը:

«Մուրճ», 1905, հմր 5, էջ 199:

**Սեպտեմբեր 20-22, Թիֆլիս** - Սողոմոն Սողոմոնյանը և Գևորգ վարդապետ Դերձակյանը Թիֆլիսից դուրս են գալիս ձիասայլով և Դիլիջան-Ախտա- Երևան ճանապարհով 8 օրվա ընթացքում հասնում են Վաղարշապատ:

«Մուրճ», 1905, հմր 5, էջ 199:

**Սեպտեմբեր 28-31, Էջմիածին** - Սողոմոն Սողոմոնյանը և Գևորգ վրդ. Դերձակյանը հասնում են Էջմիածին:

Նույն տեղում:

**Հոկտեմբեր 1, Էջմիածին** - Սողոմոն Սողոմոնյան քեոթահիացին 12 տարեկան, դառնում է Ճեմարանի առաջին դասարանի աշակերտ: «Եմուտ յաշակերտութեան ճեմարանիս եւ ընկալեալ եղեւ յԱռաջին դասարան»:

Նույն օրը այս փաստը արձանագրվում է «Հանրական ցուցակ աշակերտաց ճեմարանի» անվանվող մատյանում:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, թղթ. 26, վավ. 378, թ. 131:

Կոմիտասը, սակայն, ինքնակենսագրության մեջ այլ օր է նշում.

«Սեպտեմբերի 15-ին,- հավաստիացնում է նա,- մտա Գևորգյան Ճեմարան՝ իբրև գիշերօթիկ սան»: Տե՛ս «Հայրենիք», Բոստոն, 1924, հմր 7, էջ 84: Թերևս այստեղ կա հին ու նոր տոմարի տարբերության խնդիրը:

**Հոկտեմբեր 1-2, Էջմիածին** - Գևորգ Դերձակյանը և Սողոմոն Սողոմոնյանը ներկայանում են Գևորգ Դ Կաթողիկոսին: «Բազմած էր Հայոց Հայրապետը,- գրում է Կոմիտասը,- պատկառելի մի ծերունի: Սկսավ ինձ հարց ու փորձ անել: Ես ապուշ էի կտրել-մնացել, չէի հասկանում, թե ինչ էր ասում, որովհետև խոսում էր հայերեն, իսկ ես որպես և մեր քաղաքացիք, տաճկախոս էի, թեև հայերեն գրել-կարդալ գիտեի, բայց բոլոր առարկաները անցել էի տաճիկ լեզվով, ուստի և չէի հասկանում կարդացածս ու գրածս հայերենը: Վեհը տեսավ, որ ես հայերեն չեմ իմանում, ասաց տաճկերեն լեզվով. «Դու զուր ես եկել այստեղ, որովհետև մեր ճեմարանում ամեն բան հայերեն են անցնում», ես էլ առանց քաշվելու մանկական միամտությամբ, համարձակություն եկավ վրաս և ասացի, թե «ես եկել եմ հայերեն սովորելու»:

- Էհ, լավ ձայն ունե՞ս և երգել գիտե՞ս,- հարցնում է կաթողիկոսը:

- Այո, ունեմ ու գիտեմ:

- Ի՞նչ երգեր գիտես:

- Ինչ ասես գիտեմ, հայերեն, տաճկերեն, եկեղեցական, աշխարհական:

- Շատ լավ, «Լույս զվարթը» գիտե՞ս:

- Գիտեմ:

«Լույս զվարթը» երգելիս նկատեցի, թե ինչպես նրա աչքից արցունքները գլորվում էին և թավալելով երկար ճերմակ մորուսի վրայով՝ գլորվում էին վերարկուի ծալքերի մեջ:

- Ասոր ճեմարան տարեք,- հրամայեց Վեհը Մանկունի Վահրամ եպիսկոպոսին՝ իր դիվանապետին:

Այսպես՝ Սողոմոն Սողոմոնյանը դառնում է ճեմարանի աշակերտ՝ որպես որդեգիր-գիշերօթիկ սան:

«Երբ Էջմիածին բերին Կոմիտասին,- գրում է Աբեղյանը,- նա հայերեն գրեթե չէր հասկանում, բայց լավ երգում էր եկեղեցական և այլ երգեր»:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. 71-72, տետր Ա:

«Ժամանակակիցները Կոմիտասի մասին», Երևան, 1960, էջ 135

**Մելքոն Քրիշչյան**, Անմար կանթեղ, Ե., 1969, էջ 17-18:

**Հոկտեմբեր 8, Էջմիածին** - Սողոմոն Սողոմոնյանին Քեոթահիայի թաղական խորհրդի կողմից տրված միջնորդագիրը Գևորգ Դ-ի հանձնարարությամբ մուտքագրվում է կաթողիկոսական դիվանում:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, թղթ. 3, վավ. 47, թ. I:

**Հոկտեմբեր 13, Էջմիածին** - Կաթողիկոս Գևորգ Դ-ն Քեոթահիայի խորհրդի կողմից Սողոմոն Սողոմոնյանին տված միջնորդագրի վրա մակագրում է. «Հանձնեմք վարչության ճեմարան...»: Միաժամանակ Սողոմոնյանին տեղավորել գիշերօթիկ Ա դասարանում և միջոցներ գործադրել հայերենում վարժվելու համար:

Նույն տեղում:

**Նոյեմբեր 6, Էջմիածին** - Գևորգյան ճեմարանի ուսուցչական ժողովը, իր 7-րդ նիստում լսելով Արիստակես վարդապետ Սեդրակյանի զեկուցումը, արձանագրում է.

«Ի նկատի առնելով զառաջարկութիւն Արիստակէս վարդապետի Սեդրակեան տնօրինել ինչ ի մասին Սողոմոնի Գէորգեան Քէօթահիացւոյ նորեկ աշակերտի Ա. դասարանի, զի ուսուցի առժամանակ մի ի ժառանգաւորաց դպրոցի, մինչև վարժեսցի ի խօսս հայերէն, որոշեաց ժողովս թողուլ զնա յԱ դասարանի, և անդ վարժեսցի ի խօսիլ»:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, թղթ. 26, վավ. 56, թ. 72:

**Դեկտեմբեր, Էջմիածին** - Քեոթահիացի Սողոմոն Գևորգի Սողոմոնյանը 1881/82 ուս. տարվա ընթացքում սովորում է Գևորգյան ճեմարանի դպրոցական բաժնի Ա դասարանում:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, թղթ. 26, վավ. 378, թ. 131:

**Դեկտեմբեր, Էջմիածին** - Սողոմոն Սողոմոնյանը և Ավետիս Ահարոնյանը, որպես գիշերօթիկ սան, ապրում են Գևորգյան ճեմարանում և միասին սովորում դպրոցական բաժնի Ա դասարանում:

**Ա. Ահարոնյան,** Երկերի ժողովածու, հ. Ա, Բոստոն, 1947, էջ 19:

**Դեկտեմբեր, Էջմիածին** - Գևորգյան Ճեմարանի դպրոցական բաժնի Ա դասարանում (որտեղ սովորում էր քեռթահիացի Սողոմոն Գևորգի Սողոմոնյանը) 1881/82 ուս. տարվա ընթացքում ըստ սահմանված կարգի ավանդվող առարկաները դասավանդել են հետևյալ մանկավարժները.

Կրոն - Գրիգոր եպս. Աղափիրյանց,
Հայոց լեզու - Արիստակես վրդ. Սեդրակյան,
Հայկական ձայնագրություն - Ղեոնդ վրդ. Հովակիմյան,
Մաթեմատիկա - Մարտիրոս Սիմոնյան,
Բնական պատմություն - Գրիգոր Տեր-Գրիգորյան,
Ռուսաց գրականություն - Փիլիպոս Վարդանյան,
Գեղագրություն - Մարտիրոս Քերեսթեճյան,
Ռուսաց լեզու - Բարսեղ Բաստամյան,
Նկարչություն - Առաքել Սագինյան,
Տաճկաց լեզու - Ռուբինյան:

«Արարատ», 1881, հմր 12, էջ 652--655:

**Դեկտեմբեր, Էջմիածին** - Գևորգ Դ Կաթողիկոսը հանձնարարում է, որ Ս. Պատարագի և ժամերգության ընթացքում Հայրապետական Աթոռի մոտ կանգնեցնեն մանկահասակ Սողոմոն Սողոմոնյանին, որպեսզի ավելի մոտիկից լսի նրա երգած «Լույս զվարթը»:

Երբ Գևորգ Դ Կաթողիկոսը իջնում էր Վեհարանից Մայր Տաճար,- գրում է Կոմիտասը «Ինքնակենսագրականում»,- ես և իմ մի ձայնեղ ընկերս կանգնած էինք նորա աթոռի մոտ և այդպես երգում էինք: Մեր երգելու ժամանակ ծերունի Հայրապետի արցունքները գլորվում էին և թավալվելով երկար ու ճերմակ մորուսի վրայով՝ թաքնվում էին փիլոնի ծալքերի մեջ»:

«Մուրճ», 1905, հմր 5, էջ 200:

«Էջմիածին», 1969, հմր 12, էջ 7:

**Դեկտեմբեր, Էջմիածին** - «Արարատ» ամսագրի հերթական համարում հրապարակվում է Գևորգյան Ճեմարանի դպրոցական ու լսարանական բաժիններում 1881/82 ուս. տարվա ընթացքում ավանդվող առարկաների ու մանկավարժների ցանկը:

«Արարատ», 1881, հմր 12, էջ 652-655:

## 1882

**Մայիս 9, Էջմիածին** - Գևորգ Դ Կաթողիկոսը հանդիսավոր պարագաներում, այլոց հետ միասին, եպիսկոպոս է ձեռնադրում Սողոմոն Սողոմոնյանին Էջմիածին բերող Գևորգ վարդապետ Դերձակյանին:

«Արարատ», 1882, հմր 5, էջ 208:

**Մայիս 14, Էջմիածին** - Տեղի է ունենում Գևորգյան Ճեմարանի ուսուցչական խորհրդի ԻԶ (26) նիստը: Քննության առնելով Ճեմարանի աշակերտների տարեկան ու ամսական առաջադիմությունը՝ ժողովը որոշում է «թողուլ առանց քննութեան զհետևեալ աշակերտս՝ իւրաքանչիւր ի դասարանի իւրում առաջնում»: Ա դասարանի մնացողների ցանկում 10-րդ համարի դիմաց գրված է Սողոմոն Սողոմոնյանի անու-

նը:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, թղթ. 26, վավ. 777, թ. 38:

**Մայիս 16, Էջմիածին** - Մայր Աթոռում մեծ հանդիսավորությամբ տեղի է ունենում Սրբալույս Մյուռոնի օրհնության արարողությունը:

«Արարատ», 1882. հմր 5, էջ 212:

**Տարվա առաջին կես, Էջմիածին** - «Երբ Գևորգ Կաթողիկոսն իջնում էր տաճար,- ասված է «Գեղարվեստ» պարբերականում,- Սողոմոն Գևորգյանը և Տիգրան Ռեթևոսյանն էին երգում միայնակները (Տo1o)»:

«Գեղարվեստ», Թիֆլիս, 1908, հմր 2, էջ 126:

«Էջմիածին», հմր 12, էջ 7:

«Մուրճ», Թիֆլիս, 1905, էջ 200:

**Սեպտեմբեր 10, Էջմիածին** - Գևորգյան Ճեմարանում սկսվում են 1882/1883 ուս. տարվա դասերը: Սողոմոն Սողոմոնյանը սովորում էր դպրոցական բաժնի Ա դասարանում:

Ըստ Գևորգյան Ճեմարանի տեսուչ Արշակ Նահապետյանի տված հաշվետվության՝ առարկաները դասավանդել են հետևյալ մանկավարժները.

Գրիգոր եպս. Աղափիրյանը – Կրոն,

Արիստակես եպս. Սեդրակյանը - Հայոց լեզու,

Փիլիպոս Վարդանյանը - Ռուսաց լեզու, աշխարհագրություն,

Ղևոնդ վրդ. Հովակիմյանը - Ձայնագրություն,

Բժիշկ Գրիգոր Տեր-Գրիգորյանը - Բնական պատմություն,

Մարտիրոս Սիմոնյանը - Թվաբանություն,

Առաքել Սագինյանը - Նկարչություն,

Մարտիրոս Քերեստերճյանը - Գեղագրություն,

Ռուբեն Ռուբինյանը - Տաճկերեն:

«Արարատ», 1881, հմր 12, էջ 652-654, 1882, հմր 9, էջ 305, հմր 11, էջ 398, 408-410:

**Նոյեմբեր, Վաղարշապատ** - «Արարատ» ամսագրի հերթական համարում հրապարակվում է 1881/82 ուս. տարվա ընթացքում Գևորգյան Ճեմարանում սովորողների որտեղացի լինելու ցուցակը: Ըստ ցուցակի՝ Անատոլիայի Քեոթահիա քաղաքից Ճեմարանում սովորում էր մեկ աշակերտ՝ Սողոմոն Սողոմոնյանը:

«Արարատ», 1882, հմր 1, էջ 407:

**Դեկտեմբեր 6, Էջմիածին** - Մայր Աթոռում վաթսունինը տարեկան հասակում վախճանվում է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցին: Հանգուցյալի վրա այլևայլ հաստատությունների ու անձանց հետ պսակ են դնում նաև «Ճեմարանի սանունք»:

«Արարատ», 1882, հմր 12, էջ 414, 425:

## 1883

**Հունվար-Մայիս, Էջմիածին** - Գևորգյան Ճեմարանի դպրոցական բաժնի Ա դասարանում սովորող Սողոմոն Սողոմոնյանը անցել է հետևյալ առարկաները.

Կրոն,

Հայոց լեզու,

Ռուսաց լեզու,

Մաթեմատիկա,
Ընդհանուր աշխարհագրություն,
Բնական պատմություն,
Ձայնագրություն,
Գծագրություն,
Նկարչություն,
Գեղագրություն:
«Արարատ», 1883, հմր 10, էջ 471-472:

**Մայիս 15, Էջմիածին** - Գևորգյան Ճեմարանում ավարտվում են 1882/83 ուսումնական տարվա դասերը: Սողոմոն Սողոմոնյանը սովորում էր Ա դասարանում: Ա դասարանի աշակերտները քննություն չեն տալիս, այլ «յուրյանց տարեկան առաջադիմության թվանշաններով» փոխադրվում են հաջորդ դասարան:
«Արարատ», 1883, հմր 11, էջ 498:

**Մայիս 23, Էջմիածին** - Սողոմոն Սողոմոնյանը, ավարտելով Ճեմարանի դպրոցական բաժնի Ա դասարանը, փոխադրվում է Բ դասարան, որը արձանագրված է «Հանրական ցուցակ աշակերտաց Ճեմարանի» վերնագրով գրքում:
ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, թղթ. 26, վավ. 378, թ. 131:

**Մայիս 28, Էջմիածին** - Տեղի է ունենում Գևորգյան Ճեմարանի ուսումնական խորհրդի նիստը, որտեղ ամփոփվում են Ճեմարանի քննությունների արդյունքները: Ժողովի արձանագրությանը կցված է փոխադրվողների, վերաքննություն ունեցողների և մնացողների ցուցակները: «Ա դասարանե փոխադրվեցան ի Բ դասարան» վերնագրով ցուցակում երկրորդ համարի դիմաց գրված է Գևորգյան Սողոմոնի (Սողոմոն Գևորգի Սողոմոնյան - Խ. Ս.) անունը:
ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, թղթ. 26, վավ. 104, էջ 33:

**Նոյեմբեր, Վաղարշապատ** - «Արարատ» ամսագրում հրապարակվում է 1882/83 ուս. տարվա ընթացքում Գևորգյան Ճեմարանում սովորողների «Տեղագրության» ցուցակը: Ըստ ցուցակի՝ Անատոլիայի Քեոթահիա քաղաքից Ճեմարանում սովորում էր մեկ աշակերտ՝ Սողոմոն Սողոմոնյանը:
«Արարատ», 1883, հմր 11, էջ 500-501:

**Սեպտեմբեր 10, Էջմիածին** - Գևորգյան Ճեմարանում սկսվում են 1883/84 ուս. տարվա դասերը. Սողոմոն Գևորգի Սողոմոնյանը սովորում էր Ճեմարանի Բ դասարանում:
«Արարատ», 1884, հմր 10, էջ 470:

## 1884

**Փետրվար 19, Բուն Բարեկենդան, Քյորփալու (այժմ՝ Արշալույս)** - Ճեմարանի երկրորդ դասարանի աշակերտ Սողոմոն Սողոմոնյանը Բարեկենդանին հյուրընկալվում է իր դասընկերներից մեկի տանը՝ հիշյալ գյուղում: Այստեղ «շինականի ախոռում առաջին անգամ լսում է ժողովրդական երգը», որը նրա համար մի հայտնություն է լինում: Անմիջապես ձայնագրում է լսած երգը և խնդրում է՝ ուրիշներն էլ երգեն, և դարձյալ ձայնագրում է»:
«Օրացույց», Երուսաղեմ, 1884, փետրվար:

«Մշակ», 1905, հմր 54, 58, 59, 65, 66:

«Մուրճ», 1905, հմր 5, էջ 200-201:

**Մայիս 25, Էջմիածին** - Տեղի է ունենամ Գևորգյան Ճեմարանի ուսումնական խորհրդի ԺԵ նիստը: Ճեմարանի տեսուչ Արշակ Նահապետյանի նախագահությամբ ամփոփվում են քննությունների արդյունքները: Արձանագրության մեջ «վասն Բ դասարանի» գրանցված է. «Գևորգյան Սողոմոն վերաքննելի է ի ռուսաց լեզուէ»:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, թղթ. 26., վավ. 120, էջ 20:

**Հոկտեմբեր 1, Էջմիածին** - Տեղի է ունենում Գևորգյան Ճեմարանի ուսումնական խորհրդի Բ նիստը: Տեսուչ Արշակ Նահապետյանի նախագահությամբ քննարկվում է վերաքննություն ունեցողների հարցը: Ժողովի արձանագրությանը կցված է փոխադրվողների ու մնացողների ցուցակները: Բ դասարանի մնացողների ցանկում 6-րդ համարի դիմաց գրված է. «Գևորգյան Սողոմոն ի Քեոթահիայէ»: Չկարողանալով հանձնել ռուսաց լեզվի վերաքննությունը՝ Սողոմոն Գևորգի Սողոմոնյանը մնում է Բ դասարանում:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, թղթ. 26, վավ. 126, թ. 2 :

**Հոկտեմբեր, Էջմիածին** - Գևորգյան Ճեմարանի տեսուչ Արշակ Նահապետյանի փոխարեն ճեմարանում տեսուչ է կարգվում Գրիգոր եպիսկոպոս Աղափիրյանցը:

«Արարատ», 1884, հմր 10 էջ 470:

**Հոկտեմբեր 5, Էջմիածին** - Գևորգյան Ճեմարանում սկսվում են 1884/85 ուսումնական տարվա դասերը: Սողոմոն Սողոմոնյանը սովորում էր Ճեմարանի Բ դասարանում:

1885 թվականին «Արարատ» ամսագրում հրապարակված է Գևորգյան Ճեմարանի 1884/85 ուս. տարվա դասաբաշխման ցուցակը, ըստ որի՝ Թ դասարանում ավանդել են հետևյալ մանկավարժները.

1. Արիստակես վրդ. Դավթյան - Կրոնական առարկայք,
2. Հուսիկ վրդ. Մովսիսյան - Հայերեն,
3. Սահակ սարկ.Ամատունի - Ձայնագրություն,
4. Գևորգ Տեր-Բարդուղիմեոսյան - Հայ և ընդհանուր պատմություն, ընդհանուր աշխարհագրություն, գծագրություն և նկարչություն,
5. Աղեքսանդր Հարությունյան - Բնական պատմություն, Ռուսաստանի աշխարհագրություն,
6. Լևոն Խանդյան - Ռուսաց լեզու,
7. Արամ Մելյան - Թվաբանություն,
8. Քրիստափոր Տեր-Վրթանեսյան - Վայելչագրություն (հայերեն և ռուսերեն):

«Արարատ», 1885, հմր 12, էջ 549:

**Հոկտեմբեր 26, Կ. Պոլիս** - Վախճանվում է Կ. Պոլսի հայոց Պատրիարք Ներսես արքեպս. Վարժապետյանը:

«Արարատ»., 1885, հմր 1, էջ 39:

**Հոկտեմբեր, Վաղարշապատ** - «Արարատ» ամսագրի հերթական համարում հրապարակվում է 1883/84 ուս. տարվա ընթացքում Գևորգյան Ճեմարանում սովորողների որտեղացի լինելու ցուցակը: Ըստ ցուցակի՝ Ճեմարանում Անատոլիայի Քեոթահիա քաղաքից սովորում էր մեկ աշակերտ՝ Սողոմոն Սողոմոնյանը:

«Արարատ», 1884, հմր 10, էջ 469:

## 1885

**Մայիս 18, Էջմիածին** - Գևորգյան Ճեմարանում ավարտվում են 1884/85 ուսումնական տարվա դասերը:

«Արարատ», 1885, հմր 2, էջ 549:

**Մայիս 22, Էջմիածին** - Տեղի է ունենում Գևորգյան Ճեմարանի ուսումնական խորհրդի Ժ նիստը: Ճեմարանի տեսուչ Գր. Աղափիրյանի նախագահությամբ ժողովը լսում է, թե որ դասարաններն են քննություն ունենալու և որ առարկայից: Ժողովը որոշում է Բ դասարանի աշակերտներին տարեկան գնահատականի հիման վրա, առանց քննության, փոխադրել Գ դասարան: Բ դասարանի աշակերտ Սողոմոն Սողոմոնյանը առանց քննության փոխադրվում է Գ դասարան:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, թղթ. 2h, վավ. 143, թ. 6:

**Գարուն, Վաղարշապատ** - Գևորգյան Ճեմարանի դասարանական բաժնում սովորող Սողոմոն Սողոմոնյանը և լսարանականի շրջանավարտ Մանուկ Աբեղյանը ծանոթանում են միմյանց: «Այդ ժամանակ,- գրում է Աբեղյանը իր հուշերի մեջ,- նա սկսել էր գրավվել հայ ժողովրդական երգերի եղանակներով, հեշտությամբ սովորել էր այդ եղանակները և երգում էր, ես էլ իմ կողմից հետաքրքրվում էի ժողովրդական երգերով և ընդհանրապես ժողովրդական բանահյուսությամբ: Այս հանգամանքը ահա առիթ եղավ մեզ ընկերանալու»:

**Մանուկ Աբեղյան**, Երկեր, հ. Է, Ե., 1975, էջ 431:

**Հունիս, Էջմիածին** - Սողոմոն Գևորգի Սողոմոնյանը, ավարտելով Ճեմարանի դպրոցական բաժնի Բ դասարանը, փոխադրվում է Գ դասարան:

Նույն ամսում այս փաստը արձանագրվում է «Հանրական ցուցակ աշակերտաց Ճեմարանի» վերնագրով գրքում:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, թղթ. 26, վավ. 378, թ. 131:

**Հունիս-Դեկտեմբեր, Էջմիածին**,- Գևորգյան Ճեմարանի Գ դասարանի աշակերտ Սողոմոն Գևորգի Սողոմոնյանը ձայնագրում է Հովակիմ վարդապետ Ղամեքյան Վաղարշապատցու երգած «Օրհնութիւն հրեշտակապետացն Միքայելի և Գաբրիելի և ամենայն երկնային զօրացն» վերնագրով շարականը (2 էջ, ձայնագրումը կատարված է հայկական ձայնանիշերով):

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. 332 թ.

**Սեպտեմբեր, Էջմիածին** - Գևորգյան Ճեմարանում սկսվում են 1885/86 ուսումնական տարվա դասերը: Սողոմոն Գևորգի Սողոմոնյանը սովորում էր Ճեմարանի Գ դասարանում:

«Արարատ», 1885, հմր 12, էջ 550:

**Դեկտեմբեր, Վաղարշապատ** - «Արարատ» ամսագրի հերթական համարում հրապարակվում է 1884/85 ուս. տարվա ընթացքում Գևորգյան Ճեմարանում սովորողների «Տեղագրության» ցուցակը: Ըստ ցուցակի՝ Ճեմարանում Անատոլիայի Քեոթահիա քաղաքից սովորում էր մեկ աշակերտ՝ Սողոմոն Սողոմոնյանը:

«Արարատ», 1885, հմր 12, էջ 553:

## 1886

**Հունվար, Վաղարշապատ** - «Արարատ» ամսագրի հերթական համարում «Պաշտոնեայք Հայաստանեայց Եկեղեցւոյ» ընդհանուր վերնագրի ներքո Ճեմարանին վերաբերվող հատվածում հրատարակված հաղորդագրությունից հայտնի է դառնում, որ պաշտոնից ազատված Գրիգոր եպս. Աղափիրյանի փոխարեն Ճեմարանում տեսուչ է կարգվել Նիկողայոս Խոսրովյանը:

«Արարատ», 1886, հմր 1, էջ 38:

**Մայիս 13, Էջմիածին** - Գևորգյան Ճեմարանում ավարտվում են 1885/86 ուսումնական տարվա դասերը: Դպրոցական բաժնում սովորող Սողոմոն Սողոմոնյանը փոխադրվում է Դ դասարան: Այդ նույն ժամանակահատվածում նրա դասընկեր (առաջին դասարանում նաև համադասարանցի) Ավետիս Ահարոնյանը աչքերի տկարության պատճառով Ճեմարանում ընդհատում է ուսումը և վերադառնում Իգդիր: Այսուհանդերձ, գրողի «Պատանեկություն» խորագրով հուշագրության մեջ կան արժեքավոր տեղեկություններ Կոմիտասի Ճեմարանական ուսումնառության այդ շրջանի (1881-1886 թթ.) վերաբերյալ: «Կոմիտասը,- գրում է նա,- կարծեմ կոկորդի ցավ ուներ, և պարանոցը միշտ փաթաթված էր մի ճերմակ լաթով: Ամբողջ դեմքի վրա իշխում էին միայն իր վառ, անուշ, ծիծաղկոտ աչքերը: Հակառակ իր թույլ կազմվածքին, նա շատ աշխույժ էր, անհանգիստ, կատակասեր: Երգ ու երաժշտությունից դուրս ուրիշ ոչինչ չէր գրավում նրան: Աշակերտական վազք ու խաղերին գրեթե չէր մասնակցում, բայց իր ձայնը անվերջ լսվում էր դասարանից, ուր նա եռանդով սևոտում էր հայկական նոտաները՝ «խո, նե, բա...», ապա եվրոպականը՝ «դո, րե, մի, ֆա, սոլ...»:

Փոքրիկ Սողոմոնն էր նա, որ հետո պիտի դառնար ազգային նշանավոր, մեծահռչակ երաժշտագետ Կոմիտաս:

**Ահարոնյան Ա.,** Երկերի ժողովածու, Բոստոն, 1947, էջ 28, հ. Թ, Վենետիկ,

Ս. Ղազար, 1948, էջ 424:

**Նույն օրը, Էջմիածին** - Տեղի է ունենում Գևորգյան Ճեմարանի ուսուցչական խորհրդի ԺԴ նիստը, որում տեսուչ Գ. Ն. Խոսրովյանի նախագահությամբ ժողովը ամփոփում է տարեվերջի քննությունների արդյունքները:

Ժողովի արձանագրությանը կցված է Գ դասարանից Դ դասարան փոխադրվողների ցուցակը (23 աշակերտ):

Այս ցուցակում 6-րդ համարի դիմաց գրված է Սողոմոնյան Սողոմոնի անունը:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 312. թղթ. 26, վավ. 158, թ. 10:

**Հունիսի սկիզբ, Էջմիածին** - «Մի երեկո,- պատմում է Մանուկ Աբեղյանը,- մտածեցի բառեր գրել Հմայակ Խուշպուլյանի Տրապիզոնում ձայնագրած «Շո-լո-լո» խորագրով երգի համար»: Հետևյալ օրը Աբեղյանը իր հորինած բառերը արտագրում է ձայնանիշերի տակ և տալիս է Ճեմարանի վերակացու Մինաս Ազնավուրյանին, սա կանչում է Կոմիտասին, հանձնարարում է սովորել և ուրիշներին էլ սովորեցնել այդ եղանակը բառերով երգել: «Երեկոյան,- շարունակում է Աբեղյանը,- արդեն պատրաստ էր Կոմիտասի փոքրիկ խումբը «Շո-լոհ» բառերով երգելու համար»: «Կոմիտասը,- շարունակում է Աբեղյանը,- այդ երգը կոչեց «Սիփանա քաջեր», դաշնակեց, մինչև վերջ էլ մշակում էր և իր կազմած խմբական երգեցողությունները միշտ փակում էր իր դաշնակած այդ երգով»:

**Մ. Աբեղյան,** Երկեր, հ. Է, Ե, 1975, էջ 432:

**Հունիս, Էջմիածին** - Գևորգյան Ճեմարանի դպրոցական բաժնի Գ դասարանի աշակերտ Սողոմոն Սողոմոնյանի Դ դասարան փոխադրվելու փաստը արձանագր-

վում է «Հանրական ցուցակ աշակերտաց ճեմարանի» վերնագրով գրքում:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, թղթ. 26, վավ. 378, թ. 131:

**Սեպտեմբեր 1, Կ. Պոլիս** - Ղալաթիո թաղամասում բացվում է Կենտրոնական վարժարանը:

«Ընդարձակ օրացույց», 190, էջ 62:

**Սեպտեմբեր 14, Էջմիածին** - Կաթողիկոս Մակար Ա-ի կոնդակով Գևորգյան ճեմարանում վերստին տեսուչ է կարգվում Արշակ Նահապետյանը:

«Արարատ», 1887, հմր 10, էջ 459, 467:

**Սեպտեմբեր 22, Էջմիածին** - Գևորգյան ճեմարանում սկսվում են 1886/87 ուս. տարվա դասերը: Սողոմոն Սողոմոնյանը սովորում էր Դ դասարանում:

1887 թվականի «Արարատ» ամսագրում հրապարակված է Գևորգյան ճեմարանի 1886/87 ուս. տարվա դասաբաշխման ցուցակը, ըստ որի՝ Դ դասարանում ավանդել են հետևյալ մանկավարժները.

1. Արիստակես եպս. Սեդրակյան - Գիտություն Ս. Գրոց,
2. Կարապետ Կոստանյան - Եկեղեցական պատմություն հայոց, տեսություն մատենագրության,
3. Ստեփանոս Պալասանյան - Պատմություն հայոց, ֆրանսերեն,
4. Փիլիպոս Վարդանյան - Ընդհանուր պատմություն, աշխարհագրություն Ռուսաստանի,
5. Ն. Խոսրովյան - Ռուսաց լեզու,
6. Մ. Պալյան - Հայոց լեզու,
7. Կ. Տեր-Մկրտչյան - Մաթեմատիկական առարկաներ,
8. Ռուբեն Ռուբինյան - Տաճկերեն (տաճկահպատակներին),
9. Ա. Նահապետյան - Բնախոսություն:

«Արարատ», 1887, հմր 10, էջ 462-465:

**Սեպտեմբեր-Դեկտեմբեր, Էջմիածին** - Սովորելով Դ դասարանում՝ Սողոմոն Սողոմոնյանը միաժամանակ ստանձնում է ժամերգության ընթացքում Գլխավոր դասապետի պաշտոնը վարելու պարտականությունը:

**Կոմիտաս**, Ինքնակենսագրական, «Էջմիածին», 1969, հմր 12, էջ 7:

## 1887

**Հունիս 1, Էջմիածին** - Տեղի է ունենում Գևորգյան ճեմարանի ուսումնական խորհրդի Դ նիստը: Ճեմարանի տեսուչ Արշակ Նահապետյանի նախագահությամբ ժողովը որոշում է «... ոչ վերաքննելի զաշակերտս որք թոյլ գտան ի հարցաքննութեան յառարկայի միում զոր ոչ աւարտին յայսմ ամի և ունի շարունակել այլ միայն զգուշացուցանիլ զնոսա զի եթէ և ի գալ ամին ոչ յառաջադիմեսցին յառարկային և կամ փոխանակ ընդ նորա յայլում թուլացուցին, առանց քննութեան մնասցին ի նմին դասարան»: Արձանագրությանը կից Դ դասարանից Ե դասարան փոխադրվողների ցուցակում թույլ աշակերտների շարքում առաջինը Սողոմոն Սողոմոնյանի անունն է, որը թույլ է եղել «ի ֆրանսերէն լեզուէ»:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, թղթ. 26, վավ. 162, թ. 3:

**Հունիս, Էջմիածին** - Գևորգյան ճեմարանի դպրոցական բաժնի Դ դասարանի ա-

շակերտ Սողոմոն Սողոմոնյանի Ե դասարան փոխադրվելու փաստը արձանագրվում է «Հանրական ցուցակ աշակերտաց Ճեմարանի» վերնագրով գրքում:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, թղթ. 26, վավ. 378, թ. 131:

**Հունիս 10, Էջմիածին** - Մակար Ա Թեղուտցու տնօրինությամբ Մաղաքիա եպս. Օրմանյանը թողնում է Կարինում իր զբաղեցրած պաշտոնը և գալիս է Էջմիածին՝ Գևորգյան Ճեմարանում դասավանդելու աստվածաբանություն:

**Մ. Օրմանեան,** Ազգապատում, Պեյրութ, 1961, հ. Գ, Մասն Ա, հմր 2927, էջ 4582:

**Սեպտեմբեր 21, Էջմիածին** - Գևորգյան Ճեմարանում սկսվում են 1887/88 ուս. տարվա դասերը: Սողոմոն Սողոմոնյանը սովորում էր ճեմարանի դպրոցական բաժնի Ե դասարանում:

«Արարատ», 1888, հմր 10, էջ 618:

**Հոկտեմբեր, Վաղարշապատ** - «Արարատ» ամսագրի հերթական համարում հրապարակվում է 1886/87 ուս. տարվա ընթացքում Գևորգյան Ճեմարանում սովորողների «Տեղագրության» ցուցակը: Ըստ ցուցակի՝ Ճեմարանում Անատոլիայի Քեոթահիա քաղաքից սովորում էր մեկ աշակերտ՝ Սողոմոն Սողոմոնյանը:

«Արարատ», 1887, հմր 10, էջ 461:

**Հունիս-Դեկտեմբեր, Էջմիածին** - Գևորգյան Ճեմարանի Գ դասարանի աշակերտ Սողոմոն Սողոմոնյանը ձայնագրում է Հովակիմ վարդապետ Ղամեքյան Վաղարշապատցու երգած «Օրհնութիւն հրեշտակապետացն Միքայէլի և Գաբրիէլի և ամենայն երկնային զօրացն» վերնագրով շարականը (2 էջ, ձայնագրումը կատարված է հայկական ձայնանիշերով):

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ., 333ա:

## 1888

**Հունվար-Մայիս, Վաղարշապատ** - Գևորգյան Ճեմարանում ավարտվում են 1887/1888 ուս. տարվա դասերը: Այդ ընթացքում Սողոմոն Գևորգի Սողոմոնյանը սովորում էր դպրոցական բաժնի Ե դասարանում: Ըստ տեսուչ Արշակ Նահապետյանի՝ տարեվերջյան «Տեղեկագրում» ներկայացրած հաշվետվության Ե դասարանում ծրագրված առարկաները դասավանդել են հետևյալ մանկավարժները.

I. Սահակ վարդապետ - Քրիստոնեական վարդապետություն,
2 Կարապետ Կոստանյան - Պատմություն մատենագրության հայոց,
3. Սարգիս Տեր-Գաբրիելյան - Ուսումն Ս. Գրոց,
4. Ստեփանոս Պալասանյան - Հայոց պատմություն,
5. Ստեփաննոս Պալասանյան - Ֆրանսերեն լեզու,
6. Փիլիպոս Վարդանյան - Ընդհանուր պատմություն,
7. Մկրտիչ Պալյան - Հայոց լեզու,
8. Հովհաննես Սաղաթելյան - Ռուսաց լեզու,
9. Հովհաննես Սաղաթելյան - Ռուսաց պատմության,
10. Գ. Տեր - Բարդուղիմեոսյան - Տիեզերագիտություն,
11. Արշակ Նահապետյան - Բնագիտություն,
12. Ռուբեն Ռուբինյան - Տաճկերեն լեզու:

«Արարատ», 1888, հմր 10, էջ 617, 622 623:

**Մայիս, երկրորդ կես, Էջմիածին** - Գևորգյան Ճեմարանում տեղի են ունենում

1887/1888 ուս. տարվա տարեվերջյան հրապարակային քննությունները: Դպրոցական բաժնի Ե դասարանի աշակերտ Սողոմոն Սողոմոնյանը մնում է նույն դասարանում:

Տեսուչ Արշակ Նահապետյանի ներկայացրած «Տեղեկագրի» «Ցուցակ փոխադրության աշակերտելոց» վերնագրով ենթաբաժնում բերված ցանկից հայտնի է դառնում, որ Ե դասարանում երկրորդ տարեցի են դարձել 4 աշակերտ: Դրանցից մեկը պետք է համարել Սողոմոն Սողոմոնյանին:

«Արարատ», 1888, հմր 10, էջ 624 625:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, թղթ. 26, վավ. 204, թ. 47:

**Հունիս 3, Էջմիածին** - Ճեմարանի տեսչի նախագահությամբ տեղի է ունենում ուսուցչական խորհրդի ԻԹ (29) նիստը: Ժողովը քննության է առնում աշակերտների առաջադիմության հարցերը և ամփոփում քննությունների արդյունքները: Ժողովի արձանագրությանը կցված են մնացողների և փոխադրվողների ցուցակները: Ե դասարանին վերաբերող ցուցակի մնացողների բաժնում 4-րդ համարի դիմաց գրված է Սողոմոն Սողոմոնյանի անունը և ապա ավելացված է. «Պահեցան ի Ե դասարանի»:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, թղթ. 26, վավ. 204, թ. 47:

**Հունիսի վերջ, Վաղարշապատ** - Գևորգյան Ճեմարանի դպրոցական բաժնի Ե դասարանի աշակերտ Սողոմոն Սողոմոնյանը ամառային արձակուրդի ժամանակ սկսում է գրառել հայ ժողովրդական երգեր ու պարերգեր: Այդ երգերի մասին Խրիմյան Հայրիկին ուղղված նամակում գրում է Կոմիտասը. «Ի պարզութիւն և ի վեհութիւն իւրեանց զնմանութիւն բերեն զնուագաց շարականաց նախնեաց մերոց սրբոյ, յորս արտայայտին կեանք և միտք Հայկական սեռիս և սոքա ցարդ կան թաղեալ ի թագստի և ի կողմն յուշից և յարուշից...»:

«Բանբեր Հաւաստանի արխիվների», Ե., 1966, հմր 2, էջ 156:

**Աշնան սկիզբ, Քանաքեռ** - Սողոմոն Սողոմոնյանը մի դասընկերոջ հետ Ճեմարանից փախչում է և, «սար ու ձոր կտրելով», հասնում Քանաքեռ գյուղը: «Այդ օրը,- հետագայում Կոմիտասը պատմել է Աղավնի Մեսրոպյանին,- մեր վերադարձին, հայաստանյան անծայրածիր դաշտերուն մեջ, մենք քրքրեցինք «Վերքեն» մեր հոգվույն մեջ պահված պատկերներու շարանները... Եվ ուխտեցինք՝ հավետ մնալ հայ ժողովրդի ճշմարիտ զավակը...»:

«Ժամ. Կոմիտասի մասին», 1960, էջ 237:

**Սեպտեմբեր, առաջին կես, Էջմիածին** - Գևորգյան Ճեմարանում սկսվում են 1888/89 ուսումնական տարվա դասերը: Սողոմոն Սողոմոնյանը սովորում էր Ե դասարանում:

«Արարատ», 1888, հմր 10, էջ 617 628:

**Սեպտեմբեր 24, Էջմիածին** - Գևորգ Դ Կաթողիկոսի անվանակոչության օրը, Ս. Պատարագից ու հոգեհանգստյան արարողությունից հետո, Ճեմարանի սրահում հանդիսավոր պարագաներում տոնվում է Գևորգյան Ճեմարանի հիմնադրման տասնչորսերորդ տարեդարձը: Հանդեսին «ներդաշնակ երգով» մասնակցում են Ճեմարանի աշակերտները՝ գլխավոր դասապետ Սողոմոն Սողոմոնյանի ղեկավարությամբ:

«Արարատ», 1888, հմր 10, էջ 616:

**Սեպտեմբեր 29-30, Վաղարշապատ** - Գևորգ Դ Կաթողիկոսի անվանակոչության օրը, Ս. Պատարագից հետո, Ճեմարանի սրահում, հանդիսավոր պարագաներում, տոնվում է Գևորգյան Ճեմարանի տասնհինգերորդ տարեդարձը, և սկսվում են

1889/1890 ուս. տարվա դասերը:

Սողոմոն Գևորգի Սողոմոնյանը փոխադրվում է Զ դասարան:

«Արարատ», 1889, հմր 9, էջ 526, հմր 10, էջ 568-571, 1890, հմր 11, էջ 62:

**Հոկտեմբեր, Վաղարշապատ** - «Արարատ» ամսագրի հերթական համարում հրապարակվում է տեսուչ Արշակ Նահապետյանի՝ Գևորգյան Ճեմարանի 1888/89 ուս. տարվա ընթացքում Գևորգյան Ճեմարանում սովորողների ցուցակը: Ըստ ցուցակի՝ Ճեմարանում Անատոլիայի Քեոթահիա քաղաքից սովորում էր մեկ աշակերտ՝ Սողոմոն Սողոմոնյանը:

«Արարատ», 1889, հմր 10, էջ 570:

**Հոկտեմբեր-Դեկտեմբեր, Էջմիածին** - Գևորգյան Ճեմարանի Զ դասարանի աշակերտ Սողոմոն Գևորգի Սողոմոնյանը ընդունում է հոգևոր կարգ՝ դառնալով Մայր Աթոռի միաբանության անդամ: «Դեռևս Գևորգյան Ճեմարանի Զ դասարանի աշակերտ էի,- գրում է Կոմիտասը «Ինքնակենսագրականի» մեջ,- երբ Մակար Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրով մտա Էջմիածնի միաբանության շարքը»:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ., 61: 71 72, տետր Բ,

«Էջմիածին», 1969, հմր 12, էջ 7:

## 1889

**Մայիս 15, Էջմիածին** - Գևորգյան Ճեմարանում ավարտվում են 1888/89 ուսումնական տարվա դասերը:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, թղթ. 26, վավ. 224, թ. 21 22,

«Արարատ», 1889, հմր 10, էջ 577:

**Մայիս, Էջմիածին** - Գևորգյան Ճեմարանում տեղի են ունենում 1888/89 ուսումնական տարվա քննությունները: Սողոմոն Սողոմոնյանը Ե դասարանից փոխադրվում է Զ դասարան, Ե դասարանի Ս. Գրոց ուսման քննության ժամանակ ներկա է լինում Ամենայն Հայոց Կաթողիկոս Մակար Ա-ն:

«Արարատ», 1889, հմր 10, էջ 577,

ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, թղթ. 26, վավ. 224, թ. 21 22:

**Հունվար-Մայիս, Էջմիածին** - Գևորգյան Ճեմարանում ավարտվում են 1888/89 ուսումնական տարվա դասերը: Այդ ընթացքում երկրորդ տարեցի Սողոմոն Սողոմոնյանը սովորում էր դպրոցական բաժնի Ե դասարանում: Ըստ տեսուչ Նահապետ աբեղայի՝ տարեվերջյան «Տեղեկագրում» ներկայացրած հաշվետվության 1888/89 ուսումնական տարվա ընթացքում դպրոցական բաժնի Ե դասարանում ծրագրված առարկաները դասավանդել են հետևյալ մանկավարժները.

1. Սահակ վարդապետ - Քրիստոնեական վարդապետությունը Հայաստանյայց Եկեղեցվո,
2. Ստեփանոս Պալասանյան - Հայոց պատմություն, ֆրանսերեն լեզու (մինչև նոյեմբեր),
3. Կարապետ Կոստանյան - Պատմություն մատենագրության հայոց,
4. Մկրտիչ Պալյան - Հայոց լեզու,
5. Սարգիս Տեր-Գաբրիելյան - Ուսումն Ս. Գրոց,
6. Հովհաննես Հովհաննիսյան - Ռուսաց լեզու,
7. Բարսեղ Գասպարյան - Մաթեմատիկա, բնագիտություն,

8. Եղիշե Մադաթյան - Ընդհանուր պատմություն, Ռուսաց պատմություն,
9. Ռուբեն Ռուբինյան - Տաճկերեն լեզու,
10. Արշակ Նահապետյան - Տիեզերագիտություն:
«Արարատ», 1889, հմր 10, էջ 573, 576:
Ե դասարանից Զ դասարան փոխադրվողների ցուցակում 13-րդ համարի դիմաց գրված է Սողոմոն Գևորգի Սողոմոնյանի անունը:
ՀՀՊԿՊԱ. ֆ. 312. թղթ. 26, վավ. 224, թ. 21-22: